МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ.Հ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

ք. Երևան **28.03.2024թ.**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/57»

(գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին)

ՊԱՐԶԵՑ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից 2023 թվականի մայիսի 5-ին տեղեկագրում (www.gnumner.am) հրապարակվել է լոգոտիպով ապրանքների ձեռքբերման «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/57» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ի թիվս այլ մասնակիցների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «ԼՈՌԵ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 07204244, այսուհետ՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 17-ի 2-րդ նիստի արձանագրության 8-րդ կետով Ընկերությունը Ընթացակարգի հրավերի 2-րդ, 3-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, իսկ 2023 թվականի հունիսի 5-ին ԵՊՀ և Ընկերության միջև կնքվել է «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/57-2» ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Կնքված Պայմանագրի մատակարարման ժամանակացույցի համաձայն Ընկերությունը պարտավորվել է կնքման օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում մատակարարում իրականացնել, սակայն մինչ օրս չի իրականացրել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն «գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը», իսկ 2.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն «վաճառողի կողմից

պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի»:

Վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝ հաշվի առնելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի պահանջները, ԵՊՀ-ն որոշել է պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը.

ՈՐՈՇԵՑ

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ սույն որոշումը կայացվելուն օրվան հաջորդող օրն այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակցին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐՈՎ
ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ՝ Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ